



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 82831 . 05. 05 2018 *8p*

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՏՈՐԱՔԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության անմիջական ղեկավարումն իրականացնելու նպատակով, հիմք ընդունելով ԵՊՀ կանոնադրության 60-րդ կետի դրույթները և ղեկավարվելով կանոնադրության 56-րդ կետի 11-րդ ենթակետով.

հ ր ա մ ա յ ու մ ե մ

1. Սահմանել, որ ԵՊՀ ներքոհիշյալ կառուցվածքային ստորաբաժանումներն իրենց գործունեությունն իրականացնում են ԵՊՀ ռեկտորի անմիջական ղեկավարությամբ.

ա) ֆակուլտետներ, ինստիտուտներ,

բ) Իջևանի մասնաճյուղ,

գ) Հաշվապահություն,

դ) Գնումների պլանավորման և պահեստավորման վարչություն,

ե) Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարան,

զ) **(ուժը կորցրել է ԵՊՀ 19.02.2018թ. ռեկտորի թիվ 31\$5 հրամանով):**

է) Ընդհանուր բաժին,

ը) **(ուժը կորցրել է ԵՊՀ 19.02.2018թ. ռեկտորի թիվ 31\$5 հրամանով):**

թ) Հատուկ բաժին,

ժ) Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության շտաբ,

ժա) Արխիվ,

ժբ) Հյուրերի տուն,

ժգ) Երևանի պետական համալսարանի կողմից հիմնադրված տնտեսական ընկերություններ,

ժդ) Անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչություն,

ժե) Հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչություն,

(«ժզ» և «ժե» կետերը լրացվել են ԵՊՀ ռեկտորի 19.02.2018թ. թիվ 31\$5 հրամանով):

ժզ) Տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչություն,

ժէ) Մշակույթի կենտրոն,

ժը) Պատմության թանգարան:

(«ժզ», «ժէ» և «ժը» կետերը լրացվել են ԵՊՀ ռեկտորի 05.05.2018թ. թիվ 8 հրամանով):

2. ԵՊՀ ներքոհիշյալ կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության անմիջական ղեկավարումը հանձնարարել.

2.1. Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին՝

- ա) Ուսումնամեթոդական վարչություն,
- բ) Հետքուհական լրացուցիչ կրթության վարչություն,
- գ) Մինչհամալսարանական կրթության վարչություն,
- դ) Որակի ապահովման կենտրոն,
- ե) Կրթական ծրագրեր իրականացնող կենտրոններ,
- զ) Համահամալսարանական ամբիոններ:

2.2. Գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտորին՝

- ա) Միջազգային համագործակցության վարչություն,
- բ) Գիտական քաղաքականության վարչություն,
- գ) Ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի բաժին,
- դ) Գիտական ստորաբաժանումներ և կենտրոններ,
- ե) Ռուսական կենտրոն,
- զ) Գիտական հանդեսներ:

2.3. Ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորին՝

- ա) *(ուժը կորցրել է ԵՊՀ ռեկտորի 19.02.2018թ. թիվ 3155 հրամանով):*
- բ) *(ուժը կորցրել է ԵՊՀ ռեկտորի 05.05.2018թ. թիվ 5 հրամանով)*
- գ) Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոն,
- դ) Շրջանավարտների և կարիերայի կենտրոն,
- ե) *(ուժը կորցրել է ԵՊՀ ռեկտորի 05.05.2018թ. թիվ 5 հրամանով)*
- զ) Ձեռներեցության զարգացման կենտրոն,
- է) *(ուժը կորցրել է ԵՊՀ ռեկտորի 05.05.2018թ. թիվ 5 հրամանով):*

2.4. Ընդհանուր հարցերի գծով պրոռեկտորին՝

- ա) Տնտեսական գործունեության կազմակերպման և վերահսկման բաժին,
- բ) Էլեկտրաէներգիայի շահագործման բաժին,
- գ) Հակահրդեհային ծառայություն,
- դ) Ուսումնաարտադրական բազաներ և ուսումնափորձնական տնտեսություն,
- ե) Ավտոպարկ,
- զ) Կաթսայատուն,
- է) Արհեստանոցներ,
- ը) Տարածքի բարեկարգման և կանաչապատման բաժին,
- թ) Բուժկետ և ատամնաբուժարան:

3. Լիազորել.

3.1. ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին՝ սույն հրամանի 2.1. կետում նշված կառուցվածքային ստորաբաժանումների բնականոն աշխատանքը կազմակերպելու (բացառությամբ աշխատողներին աշխատանքի ընդունելու, ազատելու, կարգապահական տույժերի ենթակելու հարցերի), այդ թվում՝ ուսանողների նկատմամբ կարգապահական տույժեր կիրառելու, նրանց նույն կուրսում թողնելու, համալսարանից հեռացնելու և ուսումնական պրոցեսին անմիջապես առնչվող այլ հարցեր լուծելու նպատակով արձակելու համապատասխան հրամաններ:

3.2. ԵՊՀ գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտորին՝ սույն հրամանի 2.2. կետում նշված կառուցվածքային ստորաբաժանումների բնականոն աշխատանքը կազմակերպելու (բացառությամբ աշխատողներին աշխատանքի ընդունելու, ազատելու, կարգապահական տույժերի ենթակելու հարցերի) նպատակով արձակելու համապատասխան հրամաններ:

3.3. ԵՊՀ ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորին՝ սույն հրամանի 2.3. կետում նշված կառուցվածքային ստորաբաժանումների բնականոն աշխատանքը կազմակերպելու (բացառությամբ աշխատողներին աշխատանքի ընդունելու, ազատելու, կարգապահական տույժերի ենթակելու հարցերի), այդ թվում ուսանողների ներհամալսարանական հասարակական մասնակցությունը խրախուսելու նպատակով արձակելու համապատասխան հրամաններ:


3.4. ԵՊՀ ընդհանուր հարցերի գծով պրոռեկտորին՝ սույն հրամանի 2.4. կետում նշված կառուցվածքային ստորաբաժանումների բնականոն աշխատանքը կազմակերպելու (բացառությամբ աշխատողներին աշխատանքի ընդունելու, ազատելու, կարգապահական տույժերի ենթակելու հարցերի) նպատակով արձակելու համապատասխան հրամաններ:

4. Ուժը կորցրած ճանաչել Երևանի պետական համալսարանի ռեկտորի 2014 թվականի հունիսի 12-ի թիվ 106§30 հրամանը:

5. Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ պրոռեկտորներին և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին:

6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ



Ա. Ա. ՄԻՄՈՆՅԱՆ